

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Ե-բ-ն-ի. Ա-բ-բ-ր. 1883 թ. Ա.)

ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ

ԳԼ. Ա.

Ս. Յովսէփի տարագրութիւնից յետոյ նորա կանխագոյն հա-
ճութեամբ 453 թուին Դուին մարդականական քաղաքում ժողով
կազմուեց, հայրապետ ընտրուեց Մելիտէ Մանազկերտցի և Հայ-
րապետական Աթոռը փոխադրուեց Դուին: Մելիտէ Կաթողիկո-
սին յաջորդեց Մովսէս Մանազկերտցի, որի օրով հայ նախարար-
ները ազատուեցին բանտարկութիւնից և վերագարձան Հայաս-
տան 464 թ.: Հայաստան աշխարհը ալէկոծվումէր Պարսից բռնու-
թեան երեսից, իսկ հայ ժողովուրդը նահատակվում իւր եկեղեց-
ւոյ և կրօնի համար, ուստի և այս տագնապալից ժամանակին
Մելիտէ և Մովսէս նշաւակ դառն հարստահարութեանց՝ հանդի-
սացան իբրեւ մինը հաւատոյ զինուորներից: Մովսէս կաթողիկո-
սին յաջորդեց 471 թ. Տայոց Արահեզ գիւղից Գիւտ՝ որ քաջ հը-
մուտ էր հայ և յոյն դպրութեան: Վարդանանց պատերազմից
յետոյ Գիւտ մխիթարումէր և յուսադրում հայ թշուառ ժողո-
վրդին քարոզելով Սուրբ Գիրքը և ուսուցանելով խնամարկումէր
Մամիկոնեան ու Կամսարական նահատակեալ նախարարների որը
մնացած մանուկներին և այսպէս ընդհանուր համակրութեան
արժանացած՝ ընտրուեց Կաթողիկոս: Այս տագնապալից ժամա-
նակին ուրիշ նախարարների հետ էլ Վասակ Արծրունին իւր Գոր-
գեր և Տաճատ եղբայրների հետ խոյս տուեց Յունաստան. Մար-
կիանոս կայսրը սիրով ընդունեց, և առաջարկեց նոցա հետեւել
Քաղկեդօնի ժողովին. Վասակ առաջ բերելով իւր անհմտութիւնը
կրօնական խնդիրներին՝ հրաժարուեց իսկոյն կայսեր առաջար-
կութիւնը ընդունել, ժամանակ խնդրեց մինչև ժողովի ուղղա-
փառութեան մասին Հայոց եպիսկոպոսներից տեղեկութիւն ստա-
նալը: Մամիկոնեան տան Աբրահամ եպիսկոպոս, որ Ս. Սահակի

աշակերտներից էր, ի պատասխանի Վասակի թղթին, գրեց նորան ամեն վտանգ յանձն առնել բայց Քաղկեդոնի ժողովը չընդունել. Վասակ և իւր եղբայրները ստանալով այս թուղթը, բացէ ի բաց հրաժարուեցին Քաղկեդոնի ժողովը ընդունելուց, և Մարկիանոս տեսնելով նոցա հաստատամտութիւնը, այլ ևս չըստիպեց: Վասակ և Տաճատ մեռան Կ. Պօլսում. իսկ Վասակի որդի Աղան վերադարձաւ Հայաստան, ուր կրօնաւորական կեանք էր վարում և ուսուցանում. Աղանի աշակերտների մէջ նշանաւոր եղաւ Ղազար Փարպեցի, որ գրեց Հայոց պատմութեան իւր ժամանակակից անցքերը և մի թուղթ առ Վահան Մամիկոնեան:

Մինչ հայ ժողովուրդը իւր կրօնի և եկեղեցւոյ համար արիւն էր թափում և երկիրը աւերակ էր լինում, « անմիտ և վնասակար, անպիտան և վատ մարդիկ ուրացութեամբ տէր էին դառնում, աւագակներից շատերը ուրացութեամբ յաջողութիւններ էին ձեռք բերում. երկրից լաւութիւնը՝ հեռացել, իմաստութիւնը կորել, քաջութիւնը՝ մեռել և քրիստոնէութիւնը թաք էր կացել: Հայոց զօրքերը, որ միշտ քաջութեամբ էին փայլել, իսկ զօրագլուխները յաղթութեամբ, — ծաղր էին դարձել ամենքին, մինչև նոյն ինքն Պերոզ յայտնապէս ասումէր. « անպիտան մարդ և յետին գունդ, որ իմ իշխանութեան մէջը կայ՝ ասորւոցն է, բայց ասորիներից էլ անպիտան ու յետին՝ հայն է »:

Բարիկ Սիւնին և Առնակ Ամատունին տեսնելով որ իրանց մեկուսիանալովն երկիրը աւելի ևս աւերվումէ և ուրացեալները աւելի ևս յաջողութիւն են գտնում՝ եկան Գիւտ Հայրապետի մօտ: Պարսից և ուրացեալների անօրէնութեանց նշաւակ մնացած եկեղեցին փրկելու համար՝ Հայք քանիցս օգնութիւն խնդրեցին Յունաց Լեոն կոյսրից, բայց ոչինչ օգնութիւն չըստացան: Իսկ Քատիշոյ մաղխազ պատրուակ ունելով այս բանակցութիւնը կայսեր հետ, ի շարս ուրիշ ուրացեալների անարգութեամբ լինելով Գիւտից, վրէժ լուծելու համար նորա մասին սկսեց ամբաստանել դէպի արքունիք աւելով թէ, նա արհամարհում ու անարգումէ արեգական երկրպագողներին՝ և ընդդէմ Պարսից՝ Յունաց կայսեր հետ բանակցութիւններ է անում:

Այս ամբաստանութեան համար Գիւտ արքունիք կանչուեց, ուր պատշաճաւոր համարձակութեամբ յայտնեց թէ ինքն որպէս քրիստոնեայ՝ բնականաբար քրիստոնեաներին աւելի է սիրում:

հերքեց Գաղիշոյ մաղխաղի ամբաստանութիւնը՝ կայսեր հետ յարաբերութիւն ունենալու մասին, յայտնելով որ իւր յարաբերութիւնները Յունաց հետ քաղաքական ոչ ինչ նպատակ չեն ունեցել, այլ կրօնական և բարեկամական են եղել. կրօնական՝ որովհետեւ եկեղեցական սպաններն ու զգեստները Յունաստանից են բերվում, բարեկամական՝ որովհետեւ ինքն Յունաստանում ուսում առած լինելով՝ այնտեղ բազմաթիւ բարեկամներ ունի:

Պերոզ Գիւտի փաստերը որչափ և արդարացի գտնէր, բայց Գաղիշոյի ամբաստանութեան աւելի հակամէտ լինելով յանցաւոր համարեց Գիւտին, պատճառելով թէ առանց իւր հրամանի է վարում կաթուղիկոսութիւն. ուստի և առաջարկեց ուրանալ քրիստոնէութիւնը, արեգակին երկրպագութիւն անել՝ և արքունի հրովարտակով յորդուց որդիս ժառանգաբար կաթուղիկոսական իշխանութիւն վարել: Գիւտ յանձն չառաւ և զրկուեց հայրապետական իշխանութիւնից, որ վեց տարի ամենայն արժանաւորութեամբ վարել էր. մնաց արքունիքում ի դիպահոջ և մեծ յարգանք էր վայելում թէ քրիստոնեաներից և թէ հեթանոսներից: Գիւտի բացակայութեամբ՝ յաջորդեց Արծրունի Քրիստափոր Ա. որ երեք տարի վարեց հայրապետական իշխանութիւն և վախճանուեց. իսկ Գիւտ Պարսկաստանի քրիստոնէից համար բազմաթիւ եպիսկոպոսների, քահանաներ և օտարաւագներ ձեռնադրելուց յետոյ մեծ շքով վերադարձաւ Հայաստան և խորին ծերութեան մէջ վախճանուեց ու թաղուեց Վանանգայ Ոթմոյ գիւղի՝ իւր հայրենի գերեզմանոցում:

Քրիստափորի հայրապետութեան ժամանակ, թող որ մոզութիւնը սպառնումէր քրիստոնեայ եկեղեցուն, Հայաստան եկան զանազան աղանդաւորների, ընդ որս և Մծբնայ Բարձումայ սարսիկ եպիսկոպոս, որ Նդեսիայի ասորի նեստորականների մօտ կրթութիւն ստացած լինելով նեստորականութիւն էր քարոզում: Բարձումայ Պերոզին հաճոյանալու համար, խորհուրդ էր տալիս բոլոր հպատակ քրիստոնեաներին ի մոգակրօնութիւն դարձնել, որ ի հաւատոյս բաժանուելով յոյներից՝ բոլորովին միանան պարսից հետ. սակայն Պերոզ անհնարաւորութեան փորձը տեսած լինելով տատամսում էր. վերջապէս Բարձումայ առարկելով թէ նեստորականութիւնը որպէս քրիստոնէութեան մի աղանդ հետևողներ ունենալու համար նոյն գոգաւորութեանց չի ենթարկուիլ ինչպէս

մոգութիւնն, բայց և, իբրեւ հերձուած՝ արդէն խոտելի է քրիստոնէական ուղղափառութեան, որով և յունական եկեղեցուն, — հրաման խնդրեց և ստացաւ նեստորականութիւն քարոզելու, և աւելի ևս թուլացնելու քրիստոնէութեան ոյժը, որ երկպառակուած էր Քաղկեդոնի ժողովի պատճառով:

Բարձումայ իւր քարոզութեան հետ միացրեց նաև մատնութիւն ու զրպարտութիւն. ամբաստանեց Տիգրանի եպիսկոպոսի մասին՝ Մծբինում ձեռք բերելով նորա թուղթը, որով եպիսկոպոսը յայտնում էր Յունաց և Հայոց եպիսկոպոսներին, թէ չի կարողանում կշտամբել յանցաւորներին ամբարիշտ թագաւորի տէրութեան մէջ գտնուելով, որով և եկեղեցական կանոններին հակառակ շատ անկարգութիւններ են գործւում: Պարսից արքունիքը լսելով այս ամբաստանութիւնը, առաջարկեց եպիսկոպոսին կամ մոգութիւն, կամ մահ. եպիսկոպոսը ուրախութեամբ յանձն առաւ մահը և նահատակուեց:

Բարձումայ ի նկատի ունելով Քրիստափորի Խուժաստանի և Ասորեստանի քրիստոնեաներին ուղղած զգուշացուցիչ թղթերը նորա մասին ևս ամբաստանեց որպէս գէպի յոյները հակուած ոք՝ որ զրդումէ նախարարներին յունաց պաշտպանութեան ասպաւինելով՝ վտարանջել պարսիկներէ: Այսպիսի ամբաստանութիւն նախարարների մասին էլ արեց նա, յատկապէս Ներշապուհ Արծրունու մասին՝ որ մահ սպառնալով արտաքսել էր Վասպուրականից, ուր գնացել էր Բարձումայ նեստորականութիւն քարոզելու: Բարձումայ վրէժխնդիր եղաւ Արծրունեաց ցեղից ոչ միայն արքունի հրամանաւ մեծամեծ նեղութիւններ հասցնելով, այլև ինչպէս գրում է Թովմա Արծրունի (*), Մոկաց երկրում հանդիպելով Նղիշ պատմագրին և նորանից ոտսցած լինելով Վարդանանց պատերազմի պատմութիւնը՝ միջից եղծեց Արծրունեաց տան սխրագործութիւնները: Բարձումայ Հայաստանում չը կարողացաւ երկար մընալ, վասն զի հայ նախարարները մահուան սպառնալիքով աքսորեցին իրանց սահմաններից: Գիւտ կաթուղիկոս այս աղանդաւորներից զգուշանալով, Քաւիթ անյաղթին, որ մեծ հռչակ էր վայելում՝ զրել տուեց խաչի մի ճառ:

(*) Թովմ. Արծ. եր. 88—89. տպ. ի Միջագ. Պօլս. 1852:

Գիւտի մահից յետոյ 481 թուին կաթուղիկոս ընտրուեց իւր ընկեր Յովհան Մանգակունին՝ որ Ս. Սահակի ու Մեսրոպի աշակերտներից էր։ Յովհան Մանգակունին իւր հմուտութեամբ և հայրենի եկեղեցու նախանձախնայութեամբ աշխատումէր եկեղեցին պայծառացնել պէտպէս կարգերով, և պաշտպանել՝ քաջալերելով ուխտապահներին զիմագրաւել մոգութեան։

Յովհան Մանգակունու ջանքով հաւատաւորացների հաւառակ հաւատացեալ և մայրենի եկեղեցուն հաւատարիմ՝ նախարարների ու սեպուհների թիւը օր ըստ օրէ բազմանումէր, որոնք ազգի սէրը ոչ մի մեծութեան, և քրիստոնէութիւնը ոչ մի փառքի հետ չէին փոխարինիլ։

Եկեղեցւոյ և ազգի պաշտպանների գլուխ հանդիսացաւ Վարդանի Հմայեակ եղբօր որդի Վահան մամիկոնեան՝ որ իւր Վասակ և Արտաշէս եղբայրների հետ մանկութեան հատակում Վասակ մարզպանի ձեռքով ուրիշ նախարարաւորն պատանիների հետ ուղարկուած էր պարսից արքունիք։

Հմայեակի քենակալ, կամ պատանիների մօրաքրոջ այրն Վրաց Աշուշա իշխանը մեծամեծ պարգևներով հաղիւ կարողացաւ ազատել մանուկ մամիկոնեանների՝ որոնք իրանց Զուլիկ մօր խնամքով լաւ դաստիարակութիւն ստացան և կրօնի ու հայրենեաց պաշտպան հանդիսացան։ Նախարարների նախանձը և Գաղիշոյ մաղխաղի ամբաստանութիւնները ծանրացան Վահանի վերայ, որ արքունիք կոչուելով, հաւատոյ ուրացութեամբ ազատուեց սպառնացած պատուհասներից և պատուով վերադարձան Հայաստան։

Վահան կամենումէր թողնել ահամայ ուրացութիւնը, բայց կասկածումէր նախարարներից. Հայ նախարարները ահի և սարսափի մէջ էին, որովհետեւ կասկածումէին թէ իրանց զօրքերով կը կանչուին պարսկաստան՝ պատերազմելու վրաց Վախթանգ իշխանի դէմ՝ որ սպանել էր ուրացեալ Վազգէնին և ապստամբել պարսիկներից։ Բայց այս կասկածը չիրագործուեց, այլ ընդհակառակն, եկան Հայաստան և երբ հասան Նիրակ գաւառը, ուր էր մարզպան Ատրվշնասպ Յողմանդեան և հազարապետ Վեհվեհնամ, օգուտ քաղելով հանգամանքից և հաւաստի լինելով Վահանի ահամայ ուրացութեանը, ժողովուեցին նորա մօտ և ասացին. «մեր համար շատ յարմար ժամանակէ պարսիկներին անհանգիստ անել»։ Իսկ Վահան ի նկատի ունելով նախարարների

անհաւատարմութիւնն ու միմեանց դէմ դաւաճանութիւնը, պատասխանեց. «Թէ խղճահարուած եմ՝ ուրացութեանս համար՝ եթէ ոչ բոլորդ՝ գոնէ ոմանք լաւ գիտեն. Արեւաց ուժից տւելի՝ իւրաքանչիւրդ ձեր անձից վախեցէք, որոհեալ սուտ և անվստահ մարդիկ էք: Ինձ ձեր ունայն և անպիտան խորհրդի համար անհանգիստ մի անէք»:

Նախարարները երբոր վստահացրին Վահանին իրանց հաւատարմութեամբ՝ նա էլ համաձայնեց նոցա խորհրդին և Բջնոյ Աթիկ քահանան սուրբ աւետարանով երդմեցրեց բոլորին և սուրբ աւետարանի վերայ միաբանութեան ուխտ կապել տուեց. որից յետոյ նախարարները գնացին իրանց տեղերը: Ուխտապահներին միացան նաև Սիւնեաց Բարգէն, Բակուր և Յազգ սեպուհները: Այս միաբան ուխտից բաժանուեց Վարազ—Շապուհ Ամատունին, որ դաւաճանելով իւր երդմանը յայանեց մարդպանին և ուրացեալներին Վահանեանց ուխտը: Մարդպանը և ուրացեալները շուտով աճապարեցին Շիրակայ Անի ամրոցը և այն տեղից էլ երբ շտապումէին Արտաշատ՝ Վահանանք յարձակուեցին նոցա վերայ և Քաղիշոյ մաղխաղին կալանաւորեցին. յարձակուեցին նաև Արտաշատի վերայ, որտեղից մարդպանն ու հազարասեւոր հազիւ գիշերով կարողացան Ատրպատական փախչել: Մարդպանն Ատրիշնասպ — Յոգմանդեան ուրացեալների խորհրդով մի զօրագունդ առած՝ Ատրպատականից վերադարձաւ Հայաստան և բանակեց Երասխ գետի ափին՝ Վահանի հետ պատերազմելու:

Ատրիշնասպ Յոգմանդեան մարդպանի հեռանալուց յետոյ ազգային ընտրութեամբ մարդպանի պաշտօն վարումէր Սահակ ասպետ, (որի խնդրանք Մովսէս Խորենացի գրեց Հայոց պատմութիւնը), սպարապետի պաշտօնը՝ Վահան, իսկ մաղխաղի պաշտօնը՝ Քարջոյլ: Նախ քան ճակատելը բոլոր ուխտապահները մտան Դուինու եկեղեցին. երկրպագեցին սուրբ սեղանին և ընդունեցին Յովհան Մանգակունու օրհնութիւնն ու խրատախոյսը: Վահանի խորհրդով պատերազմը տեղի ունեցաւ Ակոռի գիւղի մօտ, այն նպատակաւ, որ եթէ յաղթուին՝ ապաւինելով լեռան պառեկի խորածորներն ու անձաւները՝ անվնաս մնան: Թէև Քարջոյլ մաղխաղ նախքան պատերազմը վատաբար միացաւ պարսից հետ, սակայն և յաղթութիւնը Հայոց կողմը մնաց: Ատրիշնասպ մարդպանը և շատ ուրացեալներ սպանուեցին. և ուխտապահների ա-

ւետաւորը « խաչի զօրութիւնը յաղթեց և կը յաղթի միշտ » ձայնելով մտաւ Դուին և յաղթութեան լուրը հաղորդեց Հայոց աւագանուն: Յովհան Մանգակունին աւագանու և ժողովրդեան հետ գոհութեան մաղթանքներ արեց, աքաղանքներն ողորմութիւն բաժանեց և ազատութեան տօն կատարեց:

Այս յաղթութիւնից յետոյ ամբողջ ձմեռը պատրաստուեցին գարնանը լինելիք պատերազմի համար. Վահանը հրաւէր կարգադրոր քրիստոնեայ իշխաններին՝ ասելով. « Դ՛ու որ ցանկանում է հրկրաւոր կեանքին ժառանգորդ լինել՝ եկէք վրէժ խնդրել եկեղեցու թշնամիներից. Վրացիք պաաճաւաքանելով՝ զլացան օգնել, մնացեալ իշխաններից ոմանք Վահանի այս հրաւէրը ընդունեցին իսկ ոմանք Վրաց պէս՝ ոչ »:

Այնկալեալ պատերազմը տեղի ունեցաւ. պարսիկները անթիւ բազմութեամբ մտան Հայաստան, Վահան ընդ առաջ գլուխ եկաւ և պատերազմը տեղի ունեցաւ Արազ գաւառի Ներսէ-հապատ գիւղի մօտ: Պատերազմին ներկայ էին Յովհան Մանգակունի և Սահակ ասպետ մարզպան, որ պատահելով պարսից հրամանատարին, առ զայրոյթ սրտի, մի կողմ ձգելով նիզակը, սկսեց ձեռքերով ցուլի պէս ոգորել: Այս պատերազմն ևս վերջացաւ Հայոց յաղթութեամբ, և նշանաւոր եղաւ՝ որովհետեւ Վահանի փոքր եղբայր Վարդ, որ պարսից արքունիքում պատանդ էր՝ ազատուած ողջ առողջ միացաւ Հայոց գնդին: Յովհան Մանգակունի Ա. Հայրապետը որ իւր ներկայութեամբ եռանդն, քաջալերութիւն և ի սէր Կրօնի անձնագոհութիւն էր ազդում հայ զօրքերին, օրհնութեամբ և ուրախ սրտով ընդունեց Հայոց յաղթական վերադարձը:

Այս պատերազմից յետոյ, ամառնային տօթին Հայոց զօրքերը ծաղկէոյ սարերում հանգիստ էին վայելում, երբ Վրաց Վախթանգ իշխանը դեսպաններով յայանեց պարսից բազմաթիւ զօրքերով Վրաստան մտնելն, և օգնութիւն խնդրեց: Որովհետեւ Հայք, Աղուանք և Վիրք սուրբ Աւետարանի վերայ ուխտ էին կուպել միմեանց օգնութեամբ պաշտպանել քրիստոնէութիւնը, Վահան առաւ զօրքերը և շտապեց յօգնութիւն, և Վրաց հետ բանակեցին Կանգարաց լեռներում: Պատերազմը տեղի ունեցաւ Կուր գետի մօտ. մի ամիս քրիստոնեայ գունդն էր, միւս ամիս՝ պարսից գունդը, պատերազմի ժամանակ վրացիք և հայ նախարարներից ոմանք վախան. պատերազմի մէջ սպանուեց Սահակ

ասպետ մարզպան և Վասակ Մամիկոնեան, իսկ Վահան տեսնելով այս՝ ուխտապահ նախարարների հետ ամրացաւ Տայոց ամրոցներում:

Պարսից հրամանատար Միհրան բանակելով Յունաց և Պարսից սահմանագլուխն եղող Մկնառիջ գիւղում՝ յորդորումէր Վահանին վերջ տալ արիւնհեղութեանց և հպատակել Պարսից իշխանութեան, իսկ Վահան խոտացաւ հպատակել՝ եթէ կը գնահատուին լաւութիւնն ու քաջութիւնը, միտքն ու գիտութիւնը, անարժանները իշխանութեան չեն հասնիլ, աւագակ, անպիտան, հայկատակ և վատատոհմիկ մարդիկ այնպիսի մեծ թագաւորութիւնը խորելով կրակին երկրպագելու փոխարէն փառք ու տէրութիւն չեն ստանալ, որոնք արքունիքից հեռանալուց յետոյ թէ փառաւականին (թագաւորին) և թէ վաճառքը (կրակապաշտութիւնը) արհամարումեն. և Հայոց աշխարհի վատթարանալու պատճառը հաւատուրացներէն համարելով առայ. եթէ գնդի ղօրագլուխը վատ լինի, գունդը լաւ լինել չի կարող. և աշխարհը, որի իշխանները յետին են՝ առաջագէտ՝ ու անուանի լինել չի կարող: Եւ իբրեւ պայման հպատակութեան առաջարկեց ազատութիւն շնորհել քրիստոնէութեան. հաւատուրացութեան, համար փառք ու պատիւ չը տալ անարժաններին. լաւ կամ վատ մարդը ճանաչուի իւր գործերով. ըստ գործոյն՝ լինի հատուցումն, և Հայոց ապստամբութիւնը, ոչ թէ ստահակութեան և յանգձնութեան, այլ պարսից բռնութեան հետեանք համարուի: Իսկ եթէ հսկառակն պէտք է լինի, լաւ է քրիստոնէութեամբ մեռնել, քան ուրացութեամբ անցաւոր փառք գնել: Բանակցութիւնները շարունակվումէին դեռ, Միհրան արքունիք կանչուեց, իսկ Վահան ուխտապահ նախարարների հետ հասնելով Վաղարշապատ, Կաթողիկէ Մայր եկեղեցում ուխտ անելուց և սուրբ պատարագ կատարել տալուց յետոյ գնաց Դուին:

Միհրանի տեղ, գարնան սկզբին Հայաստան եկաւ բազմաթիւ զօրքով Չառմիհր - Հաղարաւուխտ և ուրացեալներից իմանալով Վահանեանց սակաւութիւնը՝ յարձակուեց Դուին քաղաքի վերայ. արիւնահեղ պատերազմի մէջ շատ Պարսիկներ կոտորուեցին. Հայերից ևս բաւական նահատակուեցին, և մնացեալներն էլ յրուեցին զանազան կողմեր, իսկ Վահան գնաց Խաղտեաց աշխարհը: Այս պատերազմի մէջ Յովհան Մանգակունի Աուրը Հայրապետն

և ս մահամերձ վիրաւորուեց, բայց և, Աստուծոյ ոչորմութեամբ սուղջացաւ:

Զառմիհր - Հազարաւուխտ Հայաստանի վերայ մարգարան կարգելով Շապուհ պարսկին՝ հեռացաւ. իսկ Շապուհ ամեն ջանք գործէր գնում Վահանին սպանել, բայց չէր յաջողում, մինչդեռ Վահան իւր փոքրաթիւ խմբովը մեծամեծ հարուածներ էր տալիս պարսիկ գնդին: Երբ Շապուհ լսելով Պերոզի մահուան գոյժը՝ գլխաց Պարսկաստան, Վահան ուխտապահ նախարարների հետ եկաւ Վաղարշապատ. հաժութիւնէ Մայր եկեղեցում սուրբ պատարագով ուխտ և երկրպագութիւն մատուցանելուց յետոյ, Ս. Յովհան Մանգակունտ հետ վերանորոգելու և մեծապայծառ շքեղութեամբ զարդարելու նախահոգութիւնը արեց և գնաց մարգարանական Դուին քաղաքը:

Պերոզին յաջորդեց Վաղարշ, որ համոզուելով թէ Հայոց աշխարհը խռովութեան երեսից աւերակ է դառնում, արքունիքը զրկվումէ իւր արդիւնքից՝ բազմապատիկ վնասների հետ բազմաթիւ զօրքեր և ս զրաղեցնելով, յետ կացաւ հայերին կրօնափոխանելու գիտաւորութիւնից, ուստի և Նիխոր անունով մի խեղացի և խոհեմ պարսիկ ուղարկեց Հայաստան, երկիրը խաղաղութեամբ նուաճելու և արխանահեղութիւններին վերջ տալու:

Նիխոր հասնելով Հայաստանի Հեր գաւառը, սկսեց բանակցութիւններ Վահանի հետ. Վահան ուխտապահ նախարարների հետ խորհրդածելուց յետոյ խոտաացաւ պարսից հպատակել հետեւեալ պայմաններով.

Ա. Հայք ազատութիւն ստանան իրանց հայրենի և ընդի օրէնքը պաշտել. ոչ որ չըստիպուի մագաղիթութիւն ընդունել. ոչ որ հաւատաւրաց լինելով՝ գահ և պատիւ չը ստանայ. Ասորւշանները Հայոց աշխարհից վերանան:

Բ. Ճանաչուի մարդու արժանիքը և ըստ այնմ գնահատութիւն լինի. լաւերը վարձատրուեն, իսկ վատերը պատուհասուեն. հաւատաւրացութիւնը արժանիք չը համարուի:

Գ. Քսուների և բանսարկուների խօքովը գաղափարան չըլինի այլ գէմյանգիման հրապարակական գաղափարան կառարուի:

Վահան արքունի կնքով այս պայմանները հաստատել տալուց յետոյ գնաց Նիխորի մօտ և այնուհետեւ գնաց արքունիք, որտեղից վերադարձաւ եկեղեցու ազատութեան հրովարտակն ստացած:

Յովհանն Մանգակունի Ա. Հայրապետը դուրս եկաւ Վահանին ընդ առաջ և աշխարհի խաղաղութիւնը երաշխաւորեալ ու եկեղեցին ազատուած տեսնելով հոգեզմայլ ցնծութեամբ ասաց.

« Թող ուրախանայ իմ անձը Տիրոջով, որ իւր եկեղեցու տանջուած որդւոց քրտինքը սրբեց. նոցա աշխատանքը հանգստացրեց. ղէնքերի ազտը մաքրեց. հաւատարիմների ոգին լուաց ուխտապահութեան ջրով. և բոլորին էլ հազցրեց փրկութեան հագուստ և ուրախութեան պատմութեան »: Վահան Ա. Հայրապետի և նախարարների հետ եկաւ Վաղարշապատ. կաթուղիէ Մայր եկեղեցում և Ա. կոյսերի նահատակութեան վանքերում ուխտը կատարելուց յետոյ գնաց Դուին: Վահան Յովհանն Մանգակունու խորհրդով սկսեց աւերեալ եկեղեցիքը նորոգել, յատկապէս Վաղարշապատու կաթուղիէն որ յանձնուած էր Վաղար Փարպեցուն:

Անգեղան՝ որ Շապուհից յետոյ կարգուած էր մարզպան Հայոց, տեսնելով Վահանի բարեմասնութիւնները թէ՛ ըստ քաջութեան, թէ՛ ըստ աշխարհաշինութեան և թէ՛ ըստ աշխարհավորութեան, փրազառնալով Պարսկաստան համազեց Վաղարշին Վահանին կարգել մարզպան՝ ասելով. օտարը երկու երեք տարուց յետոյ հաղիւ է կարողանում ճանաչել աշխարհի հանգամանքը, հեշտն ու գծուարինը. իսկ Վահան իբրեւ ընկի՝ գիտէ բոլորը և կարող է շահաւէտ լինել թէ երկրին և թէ արքունեաց: Վահան արքունի հրովարտակով կարգուեց մարզպան:

Վահան մարզպանութեան հրովարտակն ստանալուն պէս շտապեց Դունայ Մայր եկեղեցին, մեծամեծների հետ խոնուիւ և ժողովուրդը գէպի եկեղեցի. Յովհանն Մանգակունի սուրբ հայրապետը ի սիրտ և ի հոգի ուրախացած՝ գոհացողական մաղթանք կատարեց. յորդորելով սիրել եկեղեցին՝ որ խաղաղութեան և սիրոյ միջնորդ է. ներողութեամբ և կարեկցաբար վարուել ուրացեալների հետ, առ պատրաստելով նոյա դարձը: Սէր, հաշտութիւն, խաղաղութիւն և շինութիւն քարոզելով՝ Սուրբ Հայրապետը խօսքը ուղղեց գէպի եկեղեցու հարազատները և այնքան աշխատութիւններից յետոյ հրաւիրեց գէպ ի հանգիստը՝ որ խոստացել է Փրկիչ ասելով. « Նկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն ի սկզբանէ աշխարհի »:

Վահանի մարզպանութեամբ առ ժամանակ մի դադարեց հայ եկեղեցու երեսնամեայ հալածանքը: Պարսիկները երեսնամեայ

մաքառումից յետոյ ուր ուրեմն հասկացան թէ անհնարին է մի ազգ իւր ազգային կրօնից ու սովորութիւնից ուժով յեղաշրջել դէպի մի այլ կրօն և սովորութիւն: Ահա այսպէս վերջացաւ երեսնամեայ հալածանքը Հայ եկեղեցու, որին սակաւ բացառութեամբ հաւատարիմ մնալով հայերը՝ ամեն նեղութիւն, վիշտ, տառապանք, տարագրութիւն, մահ, և աւերութիւնք յանձն առան: Հայք նեղութեան մէջ, քրիստոնէական եղբայրսիրութեամբ ի հարկաւոր դէպս շտապումէին օգնել Աշուանից և Վրաց, սակայն այս բոլոր հալածանաց ժամանակ, Յունաց հըօր կայսերութիւնը ոչինչ օգնութիւն չըհասցրեց Պարսիկների բարբարոսութեանց նշաւակ եկեղեցուն, թէև քանիցս յօգնութիւն կոչուեց: Հալածման զազարումից յետոյ, եկեղեցւոյ փրկութեան բաղմաշխատ նահատակ և եկեղեցւոյ պայծառութեան ժիր մշակ Սուրբ Յովհան Մանգակունի հայրապետը վախճանումէ խորին ծերութեան մէջ:

(Նարեկայի)

Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑԶԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Ամեն որ, երբ մի որ և է պաշտօնով է պարապում՝ պէտք է խղ պաշտօնին վերաբերեալ տեղեկութիւնները և պատրաստութիւնը ունենայ. այնպիսին միշտ առաջ է դնում—և կատարելագործվում՝ երբ իւր ունեցած տեղեկութիւններով չի բաւականանում, այլ հետ զհետէ ինքնուրոյն աշխատութեամբ ձեռք է բերում իւր պաշտօնին վերաբերեալ նոր տեղեկութիւնները:

Աւուցիչն, իւր պաշտօնի համար մի որոշեալ պատրաստութիւն ունենալով՝ միշտ միևնոյն զարգացման աստիճանի վերայ պիտի չը մնայ. նա հետ զհետէ պիտի կատարելագործուի իւր պաշտօնի *) մէջ:

Աւուցչի կատարելագործութիւնն անհրաժեշտ է:

Նախ՝ նորա համար, որ աշակերտների վերայ արդիւնաւոր ազդեցութիւն ունենայ, Ով որ մի և նոյն տեղի վերայ է կանգնած, ուրիշին դժուարութեամբ առաջ կը տանի. ով որ կատարելագործուելու սէր չունի, նա ուրիշ-

(*) Ցաւելով պէտք է խոստովանեմ, որ իմ պաշտօնակիցներիցս շատերն իրանց պաշտօնին վերաբերեալ ոչ մի գործածքով չեն հետաքրքրվում եւ չեն կարգում...